ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ

ՔԱՋԱՋՈՒՆ ԶԻՆՎՈՐՆԵՐ ԵՎ ՍՊԱՆԵՐ

«ԵՂԻՐ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄԻՆՉԵՒ ՄԱՀ.
ԵՎ ՔԵԶ ԿՅԱՆՔԻ ՊՍԱԿԸ
ՊԻՏԻ ՏԱՄ»
(հայտ. 2:10)

Հայաստանի Հանրապետությունը եւ Հայոց Արցախ աշխարհը ներքաշված են պարտադրյալ պատերազմի մեջ: Պատերազմ, որ այնքան զրկանք, կսկիծ ու տառապանք, որ այնքան արյուն ու արցունք է բերում մեր ժողովրդին, բայց եւ մղվում է վասն աստվածապարգեւ շնորհների՝ ազատ ու անկախ ապրելու հավերժական իրավունքի:

Գոհություն եւ փառք Աստուծո, որ հանուն ազատության եւ անկախության մարտի դաշտերում քաջարի հայ զինվորների ընծայաբերած կյանքը եւ հեղած արյունը պսակվում է անանց հաղթանակներով:

Մտահոգ ու անհանգիստ է սակայն Առաքելական Մայր Եկեղեցին եւ Հայրապետական Սուրբ Էջմիածինը, քանզի իր զավակների նվաճած հաղթանակները վտանգվում են հայրենիքում աղանդների ծավալած օրավուր ուժգնացող հոգեւոր պատերազմում:

Տարաբնույթ բազմաթիվ աղանդներ «մորմոններ», «Եհովայի վկաներ», «հոգեգալստականներ», «ճշմարտության եկեղեցիներ», «կրիշնայականներ» եւ «մունիներ» շահարկելով եւ հաճախ շրջանցելով



ժողովրդավարական արդար ու ազնիվ սկզբունքներ որդեգրած նորանկախ Հայաստանի Հանրապետության եւ Արցախ աշխարհի օրենքները, ներխուժել են մեր սուրբ հողը եւ արդեն իսկ տարածում գտել ինչպես ժողովրդի տարբեր խավերում, այնպես էլ Ազգային Բանակի մեջ: Ովքե՞ր են սրանք, ի՞նչ եւ ո՞ւմ են քարոզում, ո՞րն է սրանց նպատակը, ո՞ւմ շահերին են սրանք ծառայում եւ ինչո՞ւ են Հայոց բիբլիական աշխարհը եկել:

Հայրենադավ աղանդներ, հուդայակերպ քարոզիչներ եւ սուտ մարգարեներ, ոմն շվեդացի, ոմն ավստրիացի, ամերիկացի, կորեացի եւ հնդկացի եւ շատ ուրիշներ, որոնց երեւում, ի վերջո, կանգնած են որոշակի շահագրգիռ քաղաքական ուժեր, նպատակ ունենալով պառակտել օրհասական պայքարի մեջ իր ինքնությունն ու անկախությունը հաստատող մեր ժողովրդի միասնականությունը,աղճատել նրա ազգային նկարագիրը եւ թուլակամ ու հպատակ դարձնել հայկական ոգին: Աղանդներ, որոնք խեղաթյուրում են Քրիստոսի Սուրբ Ավետարանը, ժխտում Առաքելական Մայր Եկեղեցու ուղղափառ դավանությունը, մեր հայրերի սրբազան հավատքը, մերժում սրբագործված եկեղեցական մեր կանոնները եւ նվիրագործված ազգային սովորությունները, անարգում բազմադարյան մեր սրբություններն ու հոգեւոր արժեքները, պղծում սուրբ հողը հայրենի, ոչինչ ընդհանուր չունենալով մեր անցյալի, մեր ազգային ազատագրական պայքարների, մեր հոգեւոր կյանքի ու մշակույթի եւ ներկայիս մեր ցավերի ու տառապանքների հետ:

Ինչպես չզայրանալ, ինչպես չընդվզել, երբ հայորդյաց Քրիստոսակիր հոգիներում որոմներ են սերմանում, երբ Քրիստոսի անունով Քրիստոսի դեմ են գործում: Զինակիր եղբորը կորցրած ո՞ր մարտնչող հայ մարտիկը, արցունքներ հեղող որդեկորույս ո՞ր հայ մայրը, այրիացած ո՞ր հայ կինը, անտերունչ ու որբուկ մեծացող ո՞ր հայորդին պիտի անսա զենքը վայր դնելու նենգ քարոզներին աղանդավորների, երբ ունի չարի դեմ պայքարելու եւ նրա ավերների առաջքն առնելու պատգամը Քրիստոսի, երբ ունի իր նախնյաց ուղղափառ ուսմունքն ավետարանական պաշտպանել հավատքը, հողը, հայրենին, սիրել ծնողը, պահել պատիվը տան, առաքինությունը մոր, քրոջ ու հարսի: Եվ կամ, ճշմարիտ ո՞ր քրիստոնյան, իրական ո՞ր մարդասերը, որ գիտի պատվիրանը Աստծո՝ «Երբ ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը», կարիքավորին ցուցաբերող իր օգնությունը պայմանավորում է հոգեորսությամբ: Արդարեւ, սատանայական այսպիսի արարքի էր, որին քաղցյալ ու ծարավի Քրիստոս հստակ եւ վճռական պատասխան տվեց. «Հեռացի՛ր, Սատանա»:

Աղանդների եւ նրանց քարոզիչներ սմիթների, ռասլլների, մունիների, սեվերիանների ու հանսերի գործունեությունը մոտ ապագային անպայմանորեն եւս մի դառն էջ պիտի ավելացնի մեր ազգի ողբերգությունների ու կորուստների պատմության մատյանում, ինչպես կաթոլիկ միսիոներ Նիկոլ Թորոսիչի սեւ գործը լեհահայոց, այսօր այլեւս ուծացյալ, գաղութում,եթե չդիմակայենք ազգովին ու արիաբար, ինչպես արցախյան արդար մեր դատը ոտնահարողներին:

Արդ, մնանք հավատարիմ մեր Ազգային Առաքելական Մայր Եկեղեցուն եւ մեր նախնյաց սրբազան հավատքին եւ գիտենանք, Աստվածապարգեւ շնորհների՝ ազատ ու անկախ ապրելու իրավունքին բռնանալը՝ Աստծո դեմ մեղանչել ու մարտնչել, չարի դեմ պայքարելը՝ Քրիստոս պաշտել է, Հայրենիք սիրելը՝ Աստված սիրել է, նախնյաց լույս հավատքին հավատարմություն պահպանելը՝ սրբազան պարտք է, իսկ եկեղեցական կանոններին ու ազգային սովորություններին նախանձախնդրորեն փարվելը եւ աղանդները մերժելը՝ ազգի հարատեւություն եւ հավերժություն է:

Սիրելի զինվորներ եւ սպաներ Հայոց Ազգային Բանակի

Մենք, Հայ Եկեղեցու սպասավորներս, հավատում ենք, որ դուք մեզ հետ խաղաղության հանապազօրյա աղոթք առ Աստված վերառաքելով, պիտի պայքարեք «Վասն հավատոյ, վասն հայրենյայց» հայ ոգին ու նկարագիրը եղծող ամեն խորթ ու օտար երեւույթի դեմ:

Հայոց եկեղեցին եւ Քրիստոսի Սուրբ Խաչը օգնական ու պահապան ձեզ, հայոց քաջորդիներ:

Հաղթություն, փառք եւ մշտանորոգ օրհնություն ձեզ, Հայոց Ազգային Բանակի փառապանծ մարտիկներ:

«Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ»: (Հռոմ. գլխ. 8, հմր. 31):